ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

**ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆԸ** ստորև ներկայացնում է իր կարիքների համար **ՀՀ Տավուշի մարզի դատախազության Դիլիջանի նստավայրի շենքի ընթացիկ վերանորոգման աշխատանքների** ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՀԳԴ-ԳՀԱՇՁԲ-24/2** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2024 թվականի **հուլիսի 12-ին** կնքված N **«ՀԳԴ-ԳՀԱՇՁԲ-24/2»** պայմանագրում 2024 թվականի **նոյեմբերի 15-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ 1. Լրացուցիչ ծավալի աշխատանքների ձեռքբերում:
2. Աշխատանքների կատարման ժամկետի փոփոխություն:

Փոփոխության նկարագրություն 1. Պայմանագրի գնի փոփոխություն:
2. Աշխատանքների կատարման ժամկետի փոփոխություն:

Փոփոխության հիմնավորում Պայմանագրի 8.5 կետ և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 56-րդ կետի 2-րդ ենթակետ

Պատվիրատու՝ **ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ**

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
## 12.07.24թ. կնքված N ՀԳԴ-ԳՀԱՇԶԲ-24/2 գնման պայմանագրի

*ք. Երևան* *«15» նոյեմբերի 2024թ.*

ՀՀ դատախազությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Մ. Ափրիկյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Պատվիրատու, մի կողմից, և <<ՇԵՆ ՏՈՒՆ>> ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Տ. Թորոսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Կատարող մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետը, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 56-րդ կետի 2-րդ ենթակետը և 12.07.2024թ. կնքված N ՀԳԴ-ԳՀԱՇՁԲ-24/2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 ՀՀ Տավուշի մարզի դատախազության Դիլիջանի նստավայրի շենքի ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման ընթացքում ի հայտ եկած չնախատեսված լրացուցիչ ծավալներով աշխատանքների կատարման հետևանքով Կողմերը որոշեցին ավելացնել N ՀԳԴ-ԳՀԱՇՁԲ-24/2 ծածկագրով գնման պայմանագրի գինը 4121000 (չորս միլիոն հարյուր քսանմեկ հազար) ՀՀ դրամի չափով՝ *համաձայն համաձայնագրի անբաժանելի մասը* կազմող N 1 հավելվածով սահմանված Ծավալաթերթ-Նախահաշվի պահանջների:

1.2 Պայմանագրի 5.1 կետում պայմանագրի ընդհանուր գինը սահմանել 45333080 (քառասունհինգ միլիոն երեք հարյուր երեսուներեք հազար ութսուն) ՀՀ դրամ, որից 7555513 (յոթ միլիոն հինգ հարյուր հիսունհինգ հազար հինգ հարյուր տասներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

1.3 Կողմերը որոշեցին N ՀԳԴ-ԳՀԱՇՁԲ-24/2 ծածկագրով գնման պայմանագրի ամբողջ ծավալով աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգել 30 օրացույցային օրով, վերջնաժամկետը սահմանելով 2024թ. դեկտեմբերի 18-ը:

1.4 Պայմանագրի Հավելված 3-ը սահմանել համաձայն սույն համաձայմագրի Հավելված 2-ի :

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն հանաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնված կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածները հանդիսանում են համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ՀՀ դատախազություն**
**ք.Երևան, Վ.Սարգսյան 5**
**ՀՀ ֆին. նախ.աշխ.գործ.վարչ.**
**Հ/Հ 900011180081**
**ՀՎՀՀ 02506634**

-----------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

**«ՇԵՆ ՏՈՒՆ» ՍՊԸ**
**ՀՀ ք. Վանաձոր, Ազատամարտիկների 27**
**«Կոնվերս բանկ» ՓԲԸ**
**Հ/Հ 1930035873600100**
**ՀՎՀՀ 06940806**

-----------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված 1*
*« 15 » նոյեմբերի 2024 թ.*
*կնքված N2 համաձայնագրի*

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

## «ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԴԻԼԻՋԱՆԻ ՆՍՏԱՎԱՅՐԻ ՇԵՆՔԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ Ի ՀԱՅՏ ԵԿԱԾ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ՀՀ դրամ

| N/N ը/կ | Աշխատանքի անվանումը | Չափման միավոր | Քանակ | 1 միավ. ընդ.արժ. հազ.դր. | Ընդհանուր արժեքը հազ. դր. |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | **Հատակներ** | | | | |
| 1 | Լամինատե հատակների կառուցում 12մմ հաստ. սպունգով և շրիշակներով | մ² | 26,24 | 7,12 | 186,76 |
| | **Մետաղական դուռ** | | | | |
| 2 | Արտաքին Մետաղական ջերմամեկուսացված դռների տեղադրում | մ² | 9,13 | 49,79 | 454,58 |
| 3 | Մետաղական դռան վերատեղադրում | մ² | 3,94 | 23,65 | 93,16 |
| | **Տանիք** | | | | |
| 4 | Տանիքի կարովի թիթեղով ծածկի քանդում | մ² | 260,00 | 0,7 | 182,00 |
| 5 | Ջրհորդանի քանդում ջրհոս խողովակների և տախտակամածի հետ միասին | գծմ | 54,72 | 1 | 54,72 |
| 6 | Շինաղբի բարձում և տեղափոխում | տն | 1,08 | 15 | 16,20 |
| 7 | Տանիքի փայտե կոնստրուկցիաների իրականացում | մ³ | 0,62 | 165,00 | 102,96 |
| 8 | Տանիքածածկի իրականացում ցինկապատ պրոֆիլավոր գունավոր ԿՊ-21 -0,50մմ | մ² | 260,00 | 7,30 | 1898,00 |
| 9 | Ջրհորդանի իրականացում ցինկապատ գունավոր 0.50մմ թիթեղով, փայտանյութով ցվիգի հետ միասին | գծմ | 54,72 | 12,50 | 684,00 |
| 10 | Փայտե կոնստրուկցիաների հրապաշտպանություն | մ³ | 0,62 | 20,00 | 12,48 |
| 11 | Կավարամածի և տախտակամածի հրապաշտպանություն | մ² | 260,00 | 0,45 | 117,00 |
| 12 | Կավարամածի և տախտակամածի մշակում հականեխիչ նյութով | մ² | 260,00 | 0,30 | 78,00 |
| 13 | Ձյունարգելների տեղադրում | հատ | 38,40 | 3,50 | 134,40 |
| | **Ընդամենը** | | | | **4014,26** |
| | **ԱԱՀ 20%** | | | | **802,85** |
| | **Ընդամենը** | | | | **4817,117** |

* Կապալառուն աշխատանքները կատարում է **ք. Դիլիջան, Կալինինի 233** հասցեում:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ՀՀ դատախազություն**
**ք.Երևան, Վ.Սարգսյան 5**
**ՀՀ ֆին. նախ.աշխ.գործ.վարչ.**
**Հ/Հ 900011180081**
**ՀՎՀՀ 02506634**

---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

**«ՇԵՆ ՏՈՒՆ» ՍՊԸ**
**ՀՀ ք. Վանաձոր, Ազատամարտիկների 27**
**«Կոնվերս բանկ» ՓԲԸ**
**Հ/Հ 1930035873600100**
**ՀՎՀՀ 06940806**

---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված 2*
*« 15 » նոյեմբերի 2024 թ.*
*կնքված N2 համաձայնագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | |
| | | | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45461100/503 | **ՀՀ Տավուշի մարզի դատախազության Դիլիջանի նստավայրի շենքի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ** | - | 45333080.0 | 45333080.0 | 45333080.0 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ՀՀ դատախազություն**
**ք.Երևան, Վ.Սարգսյան 5**
**ՀՀ ֆին. նախ.աշխ.գործ.վարչ.**
**Հ/Հ 900011180081**
**ՀՎՀՀ 02506634**

---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

**«ՇԵՆ ՏՈՒՆ» ՍՊԸ**
**ՀՀ ք. Վանաձոր, Ազատամարտիկների 27**
**«Կոնվերս բանկ» ՓԲԸ**
**Հ/Հ 1930035873600100**
**ՀՎՀՀ 06940806**

---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ